ԲԱՔՎԻ ԿՈՄՈՒՆԱՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Բաքվի 26 կոմիսարների սպանության 50-ամյակի առթիվ)

Վ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

1917—1921 թվականներին Անդրկովկասի աշխատավորները, մասնավորապես Բաքվի պրոլետարիատը, բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ հերոսական շատ էջեր գրեցին սոցիալիստական հեղափոխության պատմության մեջ։

Այդ հերոսական էջերից է Բաքվի կոմունան, սովետական առաջին իշխանությունը Ադրբեջանում և Անդրկովկասում։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի լուրը, որ Անդրկովկաս հասավ հենց նույն օրը, վիթխարի տպավորություն գործեց երկրամասի բանվորների, գյուղացիների, ճակատի զինվորների վրա։ Աշխատավորական մասսաները ջերմորեն ընդունեցին հողի և խաղաղության մասին սովետների II համագումարի պատմական դեկրետները, սովետական կառավարության ստեղծումը՝ հեղափոխական պայքարի առաջնորդ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ։ Իրադարձությունների բնական ընթացքը տանում էր դեպի Անդրկովկասում սովետական իշխանության հաստատումը, սովետական կենտրոնական կառավարության ճանաչումը, նրա դեկրետների անհապաղ կենսագործումը։ Սակայն սովետական իշխանության հաստատման համար պայքարը Անդրկովկասում հանդիպեց լուրջ խոչընդոտների։ Դա պայմանավորված էր ոչ միայն ներքին հակահեղափոխական ուժերի դիմադրությամբ, այլև իմպերիալիստական պետությունների զինված միջամտությամբ։ Սովետական իշխանության թշնամի ներքին և արտաքին ուժերը կենաց ու մահու կռիվ հայտարարեցին սոցիալիստական հեղափոխությանը։

1917 թ. հոկտեմբերի 25-ին արդեն զինվորների, բանվորների ու գյուղացիների սովետների Կովկասյան երկրային կենտրոնը և Թիֆլիսի սովետի գործադիր կոմիտեն, որոնց գլուխ կանգնած էին մենշևիկները, էսեռները, դաշնակցականներն ու մուսավաթականները, Թիֆլիսում ստեղծեցին այսպես կոչված «Հասարակական անվտանգության անդրկովկասյան կոմիտե», որը գործնականում պետք է գլխավորեր հասարակական պայքարը։

Եթե հակահեղափոխական կոալիցիան համախմբվում էր Թիֆլիսում նախկին ցարական փոխարքայության և ապա ժամանակավոր բուրժուական կառավարության անդրկովկասյան վարչա-քաղաքական այդ կենտրոնում, ապա հեղափոխական սովետական ուժերի ամրոցը դարձավ նավթային Բաքուն, որտեղ կենտրոնացված էին Անդրկովկասի պրոլետարիատի ամենամեծ ու հեղափոխական բանակն ու բոլշևիկների բազմամարդ և ուժեղ կազմակերպությունները։

Բաքվի բոլշևիկները Ստեփան Շահումյանի գլխավորությամբ հեղափոխության առաջին օրվանից հաստատակամորեն, քայլ առ քայլ հաղթահարելով հակահեղափոխության դիմադրությունը. Բաքվի պրոլետարիատին առաջնորդում էին դեպի իշխանության գրավումը։

Կենտրոնական սովետական կառավարությունը ճանաչելու և իշխանությունը լիովին Բաքվի սովետի ձեռքը վերցնելու բոլշևիկների առաջարկը լայն արձագանք գտավ բանվորների ու զինվորների մեջ։ Բոլշևիկյան կուսակցության Բաքվի կոմիտեի կոչով հոգարավոր բանվորներ, զինվորներ ու նավաստիներ հոկտեմբերի 29-ին դուրս եկան ցույցի՝ միահամուռ կերպով պահանջելով իշխանությունը հանձնել բանվորների ու գյուղացիների սովետին։

Հոկտեմբերի 31-ին գումարված բանվորների և զինվորական դեպուտատների սովետի ընդլայնված կոնֆերանսը հայտարարելով իրեն տեղական օրենսդիր մարմին, ձայների մեծամասնությամբ ընդունեց բոլշևիկների բանաձևը Հոկտեմբերյան հեղափոխության պաշտպանության և իշխանությունը սովետի ձեռքը անցնելու մասին։

Նոյեմբերի 2-ին Բաքվի սովետի ընդլայնված կոնֆերանսը կրկին հավաքվեց ու հաստատեց իշխանությունը սովետի ձեռքը անցնելու գործնական ծրագիրը։ Բաքվի սովետի ընդլայնված նիստը ընտրեց գործադիր կոմիտեի նոր կազմ, որն ընդունակ էր պաշտպանելու սոցիալիստական հեղափոխությունը և հեղափոխական կարգ հաստատել Բաքվում։ Բաքվի սովետի գործադիր կոմիտեի նախագահ ընտրվեց բոլշևիկյան կուսակցության կենտկոմի անդամ, Բաքվի պրոլետարիատի ճանաչված ու անկուն առաջնորդ Ստ. Շահումյանը։ Գործկոմի կազմում ընտրվեցին բոլշևիկյան ականավոր գործիչներ Պ. Ջափարիձեն, Ի. Ֆիոլետովը, Մ. Բասինը, Ս. Էֆենդիևը, Ի. Վացեկը, ձախ էսեռ Մ. Վեզիրովը և ուրիշներ։

Այսպիսով, ցուցաբերելով վճռական ու ճկուն հեղափոխական տակտիկա, Բաքվի բոլշևիկները կարողացան գլխավորել բանվորների, զինվորների և նավաստիների հեղափոխական վերելքը, մեկուսացնել հակասովետական, ազգայնական բուրժուական ու մանր-բուրժուական կուսակցություններին, հոշակել սովետական իշխանությունն և Բաքուն դարձնել սոցիալիստական հեղափոխության ֆորպոստը Անդրկովկասում.

Նորընտիր գործադիր կոմիտեն նոյեմբերի 4-ին Ստ. Շահումյանի ստորագրությամբ հրատարակած կոչում դիմեց քաղաքացիներին՝ հակահարված տալ հակահեղափոխական տարրերի չարամիտ պրովակացիաներին, վճռակոնորեն աջակցել հեղափոխական իշխանության նոր օրգաններին, Վ. Ի. Լենինի գլխավորած սովետական կառավարությանը։ Սովետը հայտարարում էր, որ ինքը «անխնա կճնշի հակահեղափոխական ելույթների ամեն մի փորձ մեր քաղաքում»[1]։

Բաքվի սովետը, հենվելով բանվորական ու զինվորական լայն զանգվածների վրա, բոլշևիկների ղեկավարությամբ քայլ առ քայլ ամրապնդում էր իր իշխանությունը։ Նա վերացրեց հակահեղափոխության այնպիսի որջեր, որպիսիք էին Հասարակական անվտանգության կոմիտեն, Հասարակական կազմակերպությունների գործադիր կոմիտեն, պետական հիմնարկներում նշանակեց իր կոմիսարներին, բանկերը, նավթահանքերը և արդյունաբերական մյուս ձեռ-

1 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. III, Հայպետհրատ, 1958, էջ 19։

նարկությունները, երթևեկության ու կապի միջոցները վերցրեց իր հսկողության տակ։

Բաքվի սովետական իշխանության դեմ կատաղի պայքար հայտարարեց 1917 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում Անտանտի դիվանագետների աջակցությամբ ստեղծված Անդրկովկասյան կոմիսարիատը, որը մուսավաթականների, մենշևիկների, դաշնակցականների և էսեռների հակահեղափոխական բլոկի իշխանությունն էր։ Անդրկովկասյան կոմիսարիատը հանցավոր դաշինք կնքեց Հյուսիսային Կովկասի սպիտակգվարդիականների հետ, հրահանգեց կովկասյան ռազմաճակատից Ռուսաստան մեկնող ռուսական զորամասերի զինաթափումը և նրանց գաղանային կոտորածը, ազգային զորամասերի կազմակերպումը կալվածատիրական ու բուրժուական ազգային խորհուրդների ղեկավարությամբ, նախապատրաստեց Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից։

Անդրկովկասի բոլշևիկները մերկացրին Անդրկովկասյան կոմիսարիատի, նրա մենշևիկյան-մուսավաթական, բեկական-կալվածատիրական ղեկավարության հակահեղափոխական էությունը։ Կոմիսարիատի հակահեղափոխական քաղաքականությունը վճռականորեն դատապարտեցին կովկասյան բանակի զինվորական դեպուտատների սովետի II համագումարը, Հյուսիսային Կովկասի և արևելյան Անդրկովկասի բանվորական դեպուտատների սովետների ներկայացուցիչների համագումարը։

ՌՍՖՍՀ ժողովրդական կոմիսարների սովետը 1917 թ. դեկտեմբերի 15-ին Ստեփան Շահումյանին նշանակել էր Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար։ Այդ կապակցությամբ 1918 թ. հունվարի 7-ին նա մեկնեց Թիֆլիս։ Շահումյանի ստաջարկությամբ Բաքվի սովետի գործադիր կոմիտեի նախագահ ընտրվեց Պ. Ջափարիձեն։

Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները մեծ խանդավառությամբ ընդունեցին Ստ. Շահումյանին կովկասյան գործերի կոմիսար նշանակելու լուրը։ Շահումյանը, որպես սովետական կենտրոնական կառավարության ներկայացուցիչ, ձեռք առավ բոլոր միջոցները երկրամասում սովետական իշխանություն հաստատելու համար։ Իր պաշտոնական դիմումներում Շահումյանը կոչ էր անում բանվորների, զինվորների, գյուղացիների դեպուտատների սովետներին, Կովկասի բանվորներին՝ հակահարված տալ հակահեղափոխական բլոկի կուսակցությունների կործանարար քաղաքականությանը, ձախողել Անդրկովկասյան կոմիսարիատին փոխարինող սեյմի ստեղծման ծրագիրը, որը ավելի կսրեր քաղաքական լարվածությունը, ազգամիջյան պատերազմների, ժողովուրդների փոխադարձ բնաջնջման սպառնալիքը Անդրկովկասում։ Դիմելով սովետներին և բանվորա-գյուղացիական մասսաներին, Շահումյանը գրում էր. «Կովկասը կանգնած է անդունդի եզրին։ Փրկեցեք նրան։ Ստեղծեցեք այստեղ ինտերնացիոնալ բանվորա-գյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու ժողովրդական կոմիսարների սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի հակահեղափոխությանը և երկրի բանվոր ու գյուղացի բնակչությանը կառաջնորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»[2]։

Ստ. Շահումյանը հարկադրված էր գործել թշնամական ուժերի օղակում, որոնք պատրաստվում էին դաժան հաշվեհարդար տեսնել նրա հետ։ 1918 թ.

2 Նույն տեղում, էջ 69—70։

փետրվարի 10-ին, Անդրկովկասյան սեյմի բացման օրը, մենշևիկները Թիֆլիսում գնդակոծեցին անդեն բանվորներին, որոնք գուրս էին եկել միտինգի՝ բողոքելու Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու հակահեղափոխականների կործանարար պլանի դեմ։ Մենշևիկները միտինգում փնտրում էին Շահումյանին, բայց չկարողացան հայտնաբերել նրան։ Շահումյանին հաջողվեց ծրպտրված վերադառնալ Բաքու և այդտեղից կազմակերպել վճռական պայքար անդրկովկասյան հակահեղափոխության դեմ։

Բաքվում կենտրոնացրեց իր գործունեությունը կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեն՝ բոլշևիկ Ֆ. Կորգանովի գլխավորությամբ։ Ռազմա-հեղափոխական կոմիտեում էին աշխատում նաև նշանավոր բոլշևիկներ Բ. Շերբոլդաևը, Ի. Մալիգինը, Ի. Գաբիլևը, Ֆ. Սոլնցևը, Մ. Կոգանովը։

Բոլշևիկների Բաքվի կոմիտեն, իր կազմում ունենալով կուսակցական փորձված կադրեր, կարողանում էր բարդ իրադրության մեջ կենսագործել քաղաքական-ռազմական կարևոր միջոցառումներ՝ սովետական իշխանությունը ամրապնդելու և Ադրբեջանում ու ամբողջ Անդրկովկասում տարածելու համար։

Հաշվի առնելով հակահեղափոխական ուժերի հավանական գինված ելույթները, բոլշևիկները առաջին հերթին հոգ տարան ռազմական տեսակետից իշխանությունը ամրապնդելու մասին։ Դեռևս 1917 թ. նոյեմբերից նրանք Բաքվի շրջանային սովետներին կից ստեղծեցին ռազմա-հեղափոխական կոմիտեներ, որոնք ձեռնամուխ եղան կարմիրգվարդիական ջոկատների կազմակերպմանը։ 1918 թ. փետրվարին բանվորական կարմիրգվարդիական ջոկատներ կային Բաքվի համարյա բոլոր շրջաններում։ Նրանց ղեկավարման համար ստեղծվեց կենտրոնական շտաբ, որին ենթարկվում էին շրջանային շտաբները։ Կարմիր գվարդիան ուներ ինտերնացիոնալ անձնակազմ։

Բանվորա-գյուղացիական կարմիր բանակ ստեղծելու մասին սովետական կենտրոնական կառավարության դեկրետից հետո Բաքվի բոլշևիկյան կոմիտեն կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի հետ միասին ձեռնամուխ եղավ Բաքվում կարմիր բանակի կանոնավոր զորքերի կազմակերպմանը։ Տարբեր ազգերի հազարավոր բանվորներ կամավոր գրվեցին ծառայելու կարմիր բանակի շարքերում։

Սովետական իշխանության ամրապնդման ու պաշտպանության գործում կարևոր դեր խաղաց բոլշևիկների Բաքվի կոմիտեին կից ստեղծված կուսակցական մարտական դրուժինան։ Նրա քաղաքական կոմիսարը նշանավոր բոլշևիկ, հին բանվոր Սերգո Մարտիկյանն էր։ Դրուժինայի կազմում ընդգրկված էին կուսակցական ու սովետական պատասխանատու աշխատողներ և նրանց ընտանիքի անդամներ։

Բոլշևիկները մեծ աշխատանք տարան կասպիական ռազմական նավատորմիղը Բաքվի սովետի կողմը գրավելու համար։ Ստ. Շահումյանի գլխավորած հատուկ հանձնաժողովը զբաղվեց կասպիական նավատորմիղի վերակառուցման հարցով։ Ռազմական նավատորմիղին անձամբ այցելեց Ստ. Շահումյանը։ Նրա ելույթից հետո նավաստիները միահամուռ կերպով իրենց պատրաստակամությունը հայտնեցին կրծքով պաշտպանելու սովետական իշխանությունը։ Բաքվի սովետի կողմից նավատորմիղի կոմիսար նշանակվեց նավաստի Վ. Պոլուխինը։

Բաքվի սովետի զինված ուժերի գլուխ էին կանգնած կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեն և նրա նախագահը՝ Գ. Կորգանովը։ Այդ ուժերի շարքում 1918 թ. կային 6000 մարտիկներ։

Կազմակերպչական, ռազմական աշխատանքի հետ միասին Բաքվի բոլշևիկները ծավալեցին ագիտացիոն-մասսայական լայն գործունեություն։ Նրանք աշխատավորական մասսաներին բացատրում էին կուսակցության նպատակները, մերկացնում էին սովետական իշխանության թշնամիների պրովոկացիաները, բարձրացնում էին բանվորների դասակարգային ինքնագիտակցությունը, նրանց քաղաքական ակտիվությունը։ Խոշոր դեր էին խաղում բոլշևիկյան «Бакинский Рабочий», «Известия Совета рабочих, солдатских и матросских депутатов бакинского района», «Տեղեկագիր», «Հումեթ» թերթերը, որոնք պայքարում էին թշնամական գաղափարախոսության դեմ, մերկացնում անդրկովկասյան հակահեղափոխականների և օտարերկրյա ինտերվենտների հակասովետական գավերը։

Բաքվի սովետական իշխանության դիրքերի ամրապնդման համար մեծ նշանակություն ունեցավ սովետական կառավարության նյութական և ռազմական օգնությունը, որը ցույց տրվեց ՌԿԿ Կենտկոմի և անձամբ Վ. Ի. Լենինի ցուցումով։ 1918 թ. փետրվարին ՌՍՖՍՀ ժողովրդական կոմիսարների սովետը Բաքվի սովետին տրամադրեց 30,8 միլիոն ռուբլի դրամ, ռազմական հանդերձանք և զենք։ Սովետական կառավարությունը հնարավոր ամեն օգնություն ցույց տվեց Բաքվին նաև հետագայում։

1918 թ. փետրվարի կեսից խախտելով զինադադարը, գերմանա-թուրքական զորքերը հարձակվեցին Անդրկովկասի վրա։

Անդրկովկասյան կոմիսարիատը, չնայած իր տրամադրության տակ եղած ռազմական ղգալի ուժերին, ոչ միայն չկազմակերպեց հակահարված, այլև հանդգնորդ դաշինքի մեջ մտավ գերմանա-թուրքական իմպերիալիզմի հետ։ Սպասելով թուրքական զորքերի հարձակման հարմար առիթին, մուսավաթականները, կապեր հաստատելով թուրքական հրամանատարության հետ, 1918 թ. մարտի 30-ին Բաքվում բարձրացրին հակասովետական խռովություն։ Մուսավաթականներին Դաղստանից օգնության հասավ թուրքական գործակալ Գոցինսին։ Անդրկովկասյան կոմիսարիատը լիովին աջակցում էր մուսավաթականների գործողություններին։

Բաքվի բոլշևիկները, նրանց զինված ուժերը նախապատրաստված էին հակահեղափոխության ելույթին։ Խռովարարների դեմ մարտական գործողությունները ղեկավարելու համար կազմակերպվեց Բաքվի և նրա շրջանների պաշտպանության հեղափոխական կոմիտե, որի կազմում մտան Ստ. Շահումյանը, Պ. Ջափարիձեն, Գ. Կորգանովը, Ն. Նարիմանովը, Ն. Կուզնեցովը, ձախ էսեռ Ի. Սուխարցևը։ Պաշտպանության հեղափոխական կոմիտեի կոչով խռովարարների դեմ ոտքի կանգնեց Բաքվի ողջ պրոլետարիատը։ Երեք օր Բաքվի փողոցներում կարմիր գվարդիայի, կարմիր բանակի, կոմունիստական դրուժինայի, նավաստիների ջոկատները մարտեր էին մղում մուսավաթականների «վայրենի դիվիզիայի» և մյուս բանդաների դեմ։ Երկու կողմից կռվին մասնակցում էին 20.000 մարդ։ Մուսավաթական խռովության ջախջախմանը մասնակցեցին նաև Բաքվի հայկական ազգային խորհրդի տրամադրության տակ գտնվող հայ-

կական զորամասերը՝ 3—4 հազար մարդ[3]։ Չնայած Բաքվի հայոց ազգային խորհուրդը (որտեղ գերակշռում էին դաշնակցականները) որոշում էր ընդունել չեզոքություն պահպանել մուսավաթականների և սովետական ուժերի պայքարի ընթացքում, բայց հայկական զորամասերի մարտիկները, ըմբռնելով թուրքական իմպերիալիզմի գործակալ մուսավաթականների հաղթանակի ծանր հետևանքները Անդրկովկասի համար, միացան սովետական զորքերին և օգնեցին ջախջախելու խռովարարներին։

Բաքվի դաշնակցական պարագլուխները, հայ աշխատավորության շրջանում իրենց վարկը վերջնականապես չկորցնելու համար և տեսնելով, որ ուժերի գերակշռությունը սովետի կողմն է, հարկադրված էին հարմարվել ստեղծված դրությանը և իրենց սովետական իշխանության բարեկամ հայտարարել։ Դաշնակ ղեկավարների այդ ժամանակաշրջանի դիրքավորումը հետևյալ կերպ գնահատեց «Бакинский Рабочий» թերթը «Դաշնակցության կուսակցության մասին» առաջնորդող հոդվածում. «Ստեղծվել են պայմաններ, երբ առաջնորդները (դաշնակցության — Վ. Ա.) կամ պետք է համագործակցեն սովետական իշխանության հետ, կամ կորցնեն իրենց իշխանությունը մասսաների վրա։ Եվ առաջնորդները հարմարվում են։ Բայց եթե սովետական իշխանությունը հիմա կարող է հենվել դաշնակցության վրա, հապա վաղը պայմանները կարող են սուր կերպով փոխվել և այն ժամանակ նույն այդ կուսակցությունը կվերսկսի իր նախկին անհաշտ պայքարը պրոլետարական հեղափոխության դեմ։ Ահա ինչու հակահեղափոխականության դեմ մղվող պայքարում չմերժելով դաշնակցության օգնությունը, որը շատ արժեքավոր է տվյալ մոմենտին, մենք համենայն դեպս չպետք է կորցնենք պատմական հեռանկարը, չմոռանանք այդ կուսակցության նացիոնալիստական էությունը...»[4]։

Մարտի 30-ին ու 31-ին և ապրիլի 1-ին Բաքվում ծավալված կատաղի մարտերը ավարտվեցին Բաքվի սովետի հաղթանակով։ Թշնամին ջախջախվեց և դուրս շպրտվեց։ Այդ ժամանակաշրջանից, ինչպես նշեց Ստ. Շահումյանը, Անդրկովկասը թևակոխեց սովետական իշխանության համար մղվող զինված ակտիվ պայքարի շրջանը[5]։

Մուսավաթական խռովության ջախջախումը ոչ միայն բախտորոշ նշանակություն ունեցավ Բաքվի սովետական իշխանության, այլև ամբողջ Անդրկովկասի համար։ Այն ձախողեց նավթային Բաքուն մուսավաթականների ձեռքով գրավելու գերմանա-թուրքական պլանները։

Ժողովրդական կոմիսարների սովետին ուղարկած իր ղեկուցագրում հաղորդելով մուսավաթական խռովության ջախջախման մասին, Ստ. Շահումյանը գրում էր. «Սովետական իշխանությունը Բաքվում շարունակ օգում էր կախված մուսուլմանական նացիոնալիստական կուսակցությունների դիմադրության պատճառով...։ Եթե նրանք հաղթանակեին Բաքվում. քաղաքը կհայտարարվեր Ադրբեջանի մայրաքաղաք, բոլոր ոչ մուսուլմանական տարրերը զինաթափ կարվեին ու կկոտորվեին, մուսուլմանական հակահեղափոխական տարրերը դրության տերը կդառնային ամբողջ Անդրկովկասում։ Եթե նկատի ունենանք նրանց քաղաքական նպատակները — Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և ան-

3 Տե՛ս նույն տեղում, էջ 141։
4 «Бакинский Рабочий», № 70, 20 ապրիլի 1918։
5 Տե՛ս Ստ. Շահումյան, Երկեր, հատ. III. էջ 143։

թարկումը թուրքական հովանավորությանը — պարզ է, որ նրանց հաղթանակը Բաքվում կտաներ դեպի Անդրկովկասի կորուստը Ռուսաստանի համար»[6]։

Մարտյան հաղթանակից հետո Բաքվի սովետը դարձավ քաղաքի և նրա շրջանների լիիրավ տերը։ Ընդլայնվեց նրա իշխանությունը։ Բաքվի սովետի զորքերը, նոր կամավորներով համալրված, վճռական հաղթանակ տարան արևմուտքից և հյուսիս-արևելքից հարձակվող թշնամու ուժերի դեմ։ Ապրիլ ամսվա ընթացքում ազատագրվեցին և սովետական դարձան Լենքորանը, Շամախին, Սալյանը, Հաջի-Կաբուլը, Ղուբան, Պետրովսկը, Դերբենտը։ Ռազմաճակատում տարած հաղթանակները Բաքվի բոլշևիկներին հնարավորություն տվեցին իրագործել կարևոր միջոցառումներ, որոնք քաղաքական, ռազմական ու տնտեսական տեսակետից ամրապնդեցին սովետական իշխանությունը։

Բաքվի բոլշևիկների կոնֆերանսի որոշման համապատասխան ապրիլի 25-ին Բաքվի սովետը ընտրեց կառավարություն՝ Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետ։ Ժողկոմսովետի կազմում ընտրվեցին բոլշևիկներ և մասամբ ձախ էսեռներ։ Ժողովրդական կոմիսարների սովետի նախագահ և արտաքին գործերի ժողովրդական կոմիսար ընտրվեց Ստ. Շահումյանը, ներքին գործերի՝ Պ. Ջափարիձեն, ռազմա-ծովային գործերի՝ Գ. Կորգանովը, ժողովրդական տնտեսության կոմիսար՝ Ի. Ֆիոլետովը, քաղաքային տնտեսության կոմիսար՝ Ն. Նարիմանովը, արդարադատության կոմիսար՝ Ա. Կարինյանը, լուսավորության կոմիսար՝ Ն. Կոլեսնիկովան։ Հետագայում նահանգական կոմիսար ընտրվեց Մ. Ազիզբեկովը, աշխատանքի կոմիսար՝ Ցա. Զևինը, հողագործության կոմիսար՝ Մ. Վեզիրովը (ձախ էսեռ)։ Իր դեկլարացիայում Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետը հայտարարեց, որ «ամենասերտ կերպով կապված կլինի Համառուսաստանյան կենտրոնական իշխանության հետ, և հարմարվելով տեղական պայմաններին՝ կենսագործելու է Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարության ժողովրդական կոմիսարների սովետի բոլոր դեկրետներն ու կարգադրությունները»[7]։ Դեկլարացիայում նշվում էր, որ Բաքվի սովետը պայքարում է ամբողջ Անդրկովկասում և Դաղստանում սովետական իշխանության հաստատման համար։

Բաքվի պաշտպանության հեղափոխական կոմիտեն, ժողովրդական կոմիսարների սովետը Ստ. Շահումյանի գլխավորությամբ կարճ ժամանակամիջոցում հետևողականորեն ու վճռականորեն իրագործեցին քաղաքական, տնտեսական և կուլտուր-լուսավորական կարևոր միջոցառումներ, որոնց շնորհիվ զգալի չափով վնասազերծվեցին հակասովետական բուրժուական տարրերի դավերը, սկսեցին արմատավորվել սոցիալիստական կառավարման և տնտեսավարման սկզբունքները։ Հրատարակվեցին դեկրետներ ու կարգադրություններ Բաքվի քաղաքային դուման ցրելու, մի շարք հակասովետական թերթեր ու հրատարակություններ փակելու, քաղաքացիական կռիվների ժամանակ տուժած չքավորությանը օգնելու, կաշառակերներին, զեղծարարներին, սպեկուլյանտներին անողոք պատժելու մասին և այլն։ Կարմիր բանակի կազմակերպման ծախսերը հոգալու համար 50 միլիոն ռուբլու հարկ դրվեց ունևոր, բուրժուական խավերի վրա, համաձայնություն կնքվեց Բաքվի հայկական ազգային խորհրդի հետ նրա զորամասերը սովետական ինտերնացիոնալ բանակի կազմում մըտ-

6 Նույն տեղում, էջ 143—144։
7 Նույն տեղում, էջ 157։

ցընելու մասին։ Դա անհրաժեշտ կոմպրոմիս էր՝ Բաքվի վրա հարձակվող թուրք զավթիչներին միացյալ ուժերով հակահարված տալու համար։

Խիստ կարևոր էին Բաքվի ժողկոմսովետի անցկացրած սոցիալիստական վերափոխումները, որոնք սահմանափակեցին բուրժուազիայի տնտեսական տիրապետությունը և բարելավեցին բանվորների դրությունը։ Ազգայնացվեցին նավթարդյունաբերությունը, բանկերը, ձկնարդյունաբերությունը, կասպիական առևտրական նավատորմը։ Սահմանվեց 8-ժամյա բանվորական օր, բարձրացվեց բանվորների աշխատավարձը, բարելավվեցին նրանց բնակարանային պայմանները՝ ի հաշիվ բուրժուազիայի։ Լուրջ բարեփոխություններ մտցվեցին ժողովրդական լուսավորության գործում. դպրոցն անջատվեց եկեղեցուց, սահմանվեց ընդհանուր պարտադիր ձրի ուսուցում։

Բաքվի բոլշևիկները աշխատանք ծավալեցին գյուղացիության շրջանում ամրապնդելու Բաքվի պրոլետարիատի դաշինքը գյուղացիության հետ։ Գավառներում ստեղծվեցին գյուղացիական սովետներ։ 1918 թ. մայիսի 26-ին Բաքվում տեղի ունեցավ Բաքվի գավառի գյուղացիական դեպուտատների սովետի համագումարը, որտեղ ելույթ ունեցավ Ստ. Շահումյանը։ Գյուղացիական դեպուտատների սովետը ձուլվեց Բաքվի բանվորական ու զինվորական սովետի հետ։ Մեծ նշանակություն ունեցավ Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետի դեկրետը՝ խաներից, բեկերից ու մելիքներից հողերը բռնագրավելու մասին։

Այս բոլոր կարևոր միջոցառումները կենսագործվում էին բարդ իրադրության մեջ, քաղաքացիական պատերազմի և օտարերկրյա ինտերվենցիայի պայմաններում։

Բաքվի սովետական իշխանության, կոմունիստների ու ողջ պրոլետարիատի լարված, ստեղծագործական գործունեությանը մեծագույն ուշադրությամբ հետևում էր և անհրաժեշտ օգնություն ցույց տալիս Վ. Ի. Լենինը։ Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետը և անձամբ Ստ. Շահումյանը մշտական կապ էին պահպանում Վ. Ի. Լենինի հետ, պարբերաբար նրան հաղորդում Բաքվի և Կովկասի իրադարձությունների մասին, ցուցումներ և օգնություն խնդրում։ Նամակագրական, հեռագրական և ռադիոկապից բացի Ստ. Շահումյանը հնարավոր դեպքերում Վ. Ի. Լենինի մոտ էր գործուղում Բաքվի ժողկոմսովետի պատասխանատու աշխատողներին, որոնք տեղում Վ. Ի. Լենինի միջոցով լուծում էին Բաքվին և Անդրկովկասին վերաբերող կարևոր քաղաքական, ռազմական ու տնտեսական հարցեր։ ՌՍԴՍՀ ժողովրդական կոմիսարների սովետի որոշմամբ 1918 թ. առաջին կեսին մի քանի անգամ Բաքվի սովետական իշխանությանը հատկացվեց մեծ քանակությամբ դրամ՝ հատկապես նավթարդյունաբերությունը գործի դնելու, բանվորների աշխատավարձը վճարելու, Բաքվի պաշտպանությունը ամրապնդելու համար։ 1918 թ. ապրիլին Վ. Ի. Լենինը ընդունեց Բաքվի սովետի ներկայացուցիչներ Սահակ Տեր-Գաբրիելյանին և Վլադիմիր Բորցովին։ Մանոթանալով իրերի վիճակին, Լենինը ցուցում տվեց կառավարական համապատասխան մարմիններին՝ շուտափույթ օգնություն ցույց տալ Բաքվին։ Բաքու ուղարկվեց 5 հազար հրացան, 2 միլիոն փամփուշտ, տասնյակ գնդացիրներ, ինչպես նաև մարտական ուժեր։ Ինչպես հաղորդել է Ս. Տեր-Գաբրիելյանը, Վ. Ի. Լենինը հիացմունքով էր խոսում Բաքվի բոլշևիկների գործունեության մասին և ուղղակի հայտարարում էր, որ պետք է ամեն ինչ անել Բաքվի համար։ Երբ Ս. Տեր-Գաբրիելյանը հունիսի 23-ին վերադար-

ձավ Բաքու, Ստ. Շահումյանը այդ մասին անհապաղ հաղորդեց Վ. Ի. Լենինին. «Թանկագին Վլադիմիր Իլյիչ,— գրում էր նա,— այսօր եկավ Տեր-Գաբրիելյանը և մեզ համար բերեց 4 գրահամեքենա, 13 օդանավ և ուրիշ շատ բաներ։ Այդ բոլորի համար շատ և շատ շնորհակալություն Ձեզ։ Մենք ստացանք այն, ինչ մեզ պակասում էր և որը մեզ այժմ անգնահատելի ծառայություն է մատուցելու»[8]։

Հետևելով Բաքվի ժողկոմսովետի գործունեությանը, Վ. Ի. Լենինը հայտնելով իր հիացմունքը, միաժամանակ հրահանգում էր լինել շրջահայաց, հաշվի առնել տեղական պայմանները, հակառակորդների միջև եղած հակասությունները, կոնֆլիկտները, կարողանալ դրանք օգտագործել սովետական իշխանության ամրապնդման համար։ 1918 թ. մայիսի 14-ին Վ. Ի. Լենինը գրում էր. «Թանկագին ընկեր Շահումյան, շատ շնորհակալ եմ նամակի համար։ Մենք հրճվանքի մեջ ենք Ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությունից։ Կարողացեք դրան միացնել այն ամենազգույշ դիվանագիտությունը, որն անպայման թելադրվում է այժմյան դժվարագույն դրությամբ,— և մենք կհաղթենք։ Դժվարություններն անհաշիվ են։ Առայժմ մեզ փրկում են միայն իմպերիալիստների հակասությունները, կոնֆլիկտները ու պայքարը։ Կարողացեք օգտագործել այդ կոնֆլիկտները. առայժմ հարկավոր է դիվանագիտություն սովորել։ Լավագույն ողջույններ ու ցանկություններ և ողջույն բոլոր բարեկամներին։ Վ. Ուլյանով (Լենին)»[9]։

Բաքվի կոմունայի ամրապնդումը, նրա իրագործած սոցիալիստական վերափոխումները վարակիչ օրինակ էին Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների համար։ Այդ օրինակով ոգևորված նրանք ավելի մեծ հաստատակամությամբ էին հանդես գալիս Անդրկովկասյան կոմիսարիատի ու սեյմի դեմ։

Կոմունայի նկատմամբ ատելությամբ լցված մենշևիկները, մուսավաթականները, դաշնակները, էսեռները, չնայած իրար նկատմամբ ունեցած թշնամանքին, գործադրում էին բոլոր ջանքերը հանգցնելու հեղափոխական հրդեհը, տապալելու սովետական իշխանության միջնաբերդը Անդրկովկասում։ Օգտագործելով Անդրկովկասյան սեյմի ու նրա ղեկավար կուսակցությունների հակասովետական դիրքորոշումը, գերմանա-թուրքական իմպերիալիստները իրագործեցին Անդրկովկասը գրավելու իրենց հին երազանքը։ Նրանց թելադրանքով սեյմը պաշտոնապես հռչակեց Անդրկովկասի անկախությունը Սովետական Ռուսաստանից։

Ցուցադրելով իրեն Բրեստի դաշնագրի հակառակորդ, Անդրկովկասի բուրժուա-կալվածատիրական կառավարությունը բռնեց կապիտուլյացիայի, զավթիչների շարունակ աճող պահանջները բավարարելու ուղին։ Գերմանա-թուրքական իմպերիալիստների գլխավոր նպատակը Բաքուն գրավելն էր։ Չնայած Բաթումում սկսված բանակցություններին, թուրքական զորքերը մայիսի 15-ին անցան հարձակման, գրավեցին Ալեքսանդրապոլը և շարժվեցին դեպի Երևան ու Ղարաքիլիսա։ Նրանց նպատակն էր գրավել Հայաստանը և Աղստաֆայի ու Ջուլֆայի վրայով հարձակվել Բաքվի վրա։

Բաքվի կոմունայի դեմ գերմանա-թուրքական արշավանքների օրերին զորավար Անդրանիկը, իր ջոկատով գտնվելով Նախիջևանի գավառում, այն հայ-

8 Նույն տեղում, էջ 323։
9 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 359։

տարարեց Ռուսաստանի հանրապետության անբաժան մասը և հեռագրով կապվելով Ստ. Շահումյանի հետ, իր պատրաստակամությունը հայտնեց կռվելու Թուրքական զորքերի դեմ, կասեցնելու Պարսկաստանի վրայով նրանց առաջացումը դեպի Բաքու։ Ստ. Շահումյանը բարձր գնահատեց Անդրանիկի դիրքը և ջերմ հեռագրով ողջունեց նրա որոշումը՝ անվանելով նրան «իսկական ժողովրդական հերոս»[10]։

Հանդիպելով Բաքվի սովետի զորքերի ուժեղ գիմադրությանը, թուրքական հրամանատարությունը նոր զորամասեր նետեց ռազմաճակատ։ Միաժամանակ հյուսիսային Իրանում ծվարած անգլիական դավթիչները, որոնք պատերազմական վիճակում էին գերմանա-թուրքական իմպերիալիզմի հետ, նույնպես ձգտում էին Բաքուն գրավել և այդ ուղղությամբ իրենց գաղտնի գործակալների միջոցով նախապատրաստական աշխատանք էին տանում Բաքվի հակասովետական կուսակցությունների՝ մենշևիկների, աջ էսեռների ու դաշնակների պարագլուխների հետ։

1918 թ. հուլիսին Բաքվի կոմունայի համար ստեղծվեց ծանր դրություն. Մենշևիկները, աջ էսեռները և դաշնակները իրենց գործողություններով ճանապարհ էին հարթում օտար նվաճողների, հատկապես անգլիացիների համար։ Օգտագործելով պարենային դժվարությունները և ռազմաճակատում կրած անհաջողությունները, դաշնակցական-մենշևիկյան-աջ էսեռական բլոկին հաջողվեց խաբել և ժամանակավորապես իր հետևից տանել Բաքվի աշխատավորության մի մասին։ Արդեն հուլիսի 16-ին հակահեղափոխական բլոկը փորձեց Բաքվի սովետում անցկացնել բանաձև՝ անգլիացիներին Բաքու հրավիրելու մասին, որոնք իբր պետք է օգնեին թուրքական հրոսակների հարձակումը կասեցնելու գործին։ Բոլշևիկներին հաջողվեց այդ առաջարկը մերկացնել ու տապալել։ Այդ ծանր օրերին նրանք բացառիկ համերաշխությամբ ու հաստատակամությամբ հանդես էին գալիս թշնամիների դեմ, ձեռք առնում բոլոր միջոցները սովետական Բաքուն պաշտպանելու համար։ Բաքուն անգլիացիներին կամ իմպերիալիստական ուրիշ պետության հանձնելը համարելով մեծագույն դավաճանություն, հեղափոխականի համար անվայել վարքագիծ, Շահումյանը Բաքվի սովետում հուլիսի 16-ին հայտարարեց. «Մեր մեջ բավականին հեղափոխական զգացում և գիտակցություն կգտնվի, որպեսզի ասենք. ոչ, մենք չենք կարող հանձնվել օտարերկրյա իմպերիալիստների ձեռքը, մենք կպայքարենք մեր անկախության համար ու կպաշտպանենք այն մեր ուժերով»[11]։

Ստ. Շահումյանը մեծ պատասխանատվությամբ ու պարտաճանաչությամբ անում էր ամեն ինչ Բաքվի պաշտպանության համար։ Նա անձամբ շրջում էր կռվող զորամասերը, մեկնում առաջավոր դիրքերը, այցելում բանվորներին ու նավաստիներին, կապվում Ռուսաստանի տարբեր մարզերի սովետական օրգանների հետ՝ օգնություն խնդրում։ Ռազմաճակատ են մեկնում նաև նրա երկու որդիները՝ Սուրեն և Լևոն Շահումյանները։ Ստ. Շահումյանը շարունակ իրազեկ էր պահում Վ. Ի. Լենինին ստեղծված դրությանը, խորհուրդներ ու ցուցումներ պահանջում։ Վ. Ի. Լենինը հնարավոր ամեն տեսակի օգնություն էր կազմակերպում Բաքվի համար։ Նա հրահանգում էր երկրի զանազան սովետներին (Աստրախան, Հյուսիսային Կովկաս, Միջին Ասիա, Պետրոգրադ)

10 Տե՛ս «Бакинский Рабочий», 1918, հուլիսի 20։
11 Ստ. Շահումյան, երկեր, հատ. III, էջ 371։

ամեն ինչով օգնության հասնել Բաքվի կոմունարներին։ 1918 թ. հուլիսի 13-ին Վ. Ի. Լենինը ծովային գործերի ժողկոմատին գրում էր. «Շատ եմ խնդրում բոլոր միջոցները ձեռք առնել արագացնելու Կասպից ծով ամեն հարմար տիպի ռազմածովային նավեր հասցնելը»[12]։ Վ. Ի. Լենինի ցուցումով Բաքու ժամանեց ռազմական կոմիսար Պետրովի ջոկատը, որը կարևոր դեր խաղաց Բաքվի պաշտպանության գործում։ Բաքու եկան նաև այլ ռազմական ուժեր, որքանով այդ հնարավոր էր այն ժամանակվա պայմաններում, երբ Ռուսաստանում քաղաքացիական դաժան պատերազմ էր բորբոքված, երբ նա գտնվում էր ինտերվենտների կրակե օղակում։

Հուլիսի 25-ին Բաքվի սովետի արտակարգ նիստում Ստ. Շահումյանը հանդես եկավ քաղաքական և ռազմական դրության վերաբերյալ զեկուցումով։ Դաշնակցականները, մենշևիկները և աջ էսեռները կրկին բարձրացրին անգլիացիներին Բաքու հրավիրելու դավաճանական առաջարկը։ Դրա դեմ վճռականորեն հանդես եկան բոլշևիկները։ Հիմնավորված ելույթներ ունեցան Ջափարիձեն, Աղիզրեկովը, Զևինը և ուրիշներ։ Չնայած դրան, քվեարկության ժամանակ չնչին մեծամասնությամբ (258 ընդդեմ 231-ի) անցավ անգլիական զորքերը Բաքու հրավիրելու առաջարկը։ Քվեարկությունից հետո Ստ. Շահումյանը հանդես եկավ հայտարարությամբ, որի մեջ նշավակեց էսեռական, մենշևիկյան և դաշնակցական ֆրակցիաներին, նրանց վարքագիծը որակելով ապերախտություն և դավաճանություն հեղափոխական Ռուսաստանի նկատմամբ։

Վ. Ի. Լենինը տեղեկանալով Բաքվում ծավալվող իրադարձություններին, լիովին հավանություն տվեց բոլշևիկների, Ստ. Շահումյանի քաղաքական վարքագծին։ 1918 թ. հուլիսի 29-ին հանդես գալով համառուսաստանյան կենտգործկոմի, Մոսկվայի սովետի և արհմիությունների միացյալ նիստում, Վ. Ի. Լենինը իր ճառում նշեց, որ անգլիացիներին Բաքու հրավիրելուն դեմ քվեարկելով, Բաքվի բոլշևիկները «մի այնպիսի քայլ են արել, որը ոչ թե խոսքով, այլ գործով սոցիալիստների համար միակ արժանի քայլն է»[13]։ «Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հետ որևէ համաձայնություն կնքելուց վճռականորեն հրաժարվելը,— հայտարարեց Լենինը,— Բաքվի ընկերների միակ ճիշտ քայլն է, քանի որ չի կարելի նրանց հրավիրել առանց ինքնուրույն սոցիալիստական իշխանությունը, թեկուզ և կտրված տերիտորիայում, վերածելու իմպերիալիստական պատերազմի ստրուկի»[14]։

Մի կողմից Անտանտի և գերմանա-թուրքական իմպերիալիզմի, մյուս կողմից դաշնակցական, էսեռա-մենշևիկյան ու մուսավաթական հակահեղափոխության կողմից գրոհի ենթարկված Բաքվի կոմունան 1918 թ. հուլիսի 31-ին ընկավ։ Դավադիրները կազմեցին, այսպես կոչված, «Յենտրոկասպիի» կառավարությունը, որը Բաքուն հանձնեց անգլիացիներին, ձերբակալեց կոմունայի ղեկավարներին և պատրաստվեց նրանց հետ հաշվեհարդար տեսնել։

Սովետական կենտրոնական կառավարությունը, անձամբ Վ. Ի. Լենինը ամեն կերպ աշխատում էին փրկել կոմունարներին։ Ճշգրիտ տեղեկություններ չունենալով Շահումյանի և ընկերների բախտի մասին, Վ. Ի. Լենինը 1918 թ. օգոստոսի 9-ին անհանգստացած հեռագրում էր Աստրախանի սովետի նախա-

12 В. И. Ленин. Соч., т. 50. էջ 121։
13 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 9։
14 Նույն տեղում։

գահ Անիսիմովին. «Դրությունը Բաքվում ինձ համար այնուամենայնիվ պարզ չէ։ Ո՞վ է կանգնած իշխանության գլուխ։ Որտե՞ղ է Շահումյանը»[15]։

1918 թ. սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը մուսավաթական կառավարության հետ միասին մտան Բաքու, դաժանորեն կոտորելով 30 հազ. հայ բնակչություն։ «Յենտրոկասպիի» կառավարությունը և անգլիական «փրկիչները» գլխապատառ հեռացան քաղաքից, բանտախցիկներում թողնելով Ստ. Շահումյանին և մյուս կոմիսարներին, համոզված լինելով, որ նրանց հետ հաշվեհարդար կտեսնեն գաղգաղած թուրքական նվաճողները և մուսավաթականները։ Միայն վերջին րոպեին Անաստաս Միկոյանին և մի խումբ ընկերների հաջողվում է ազատել բանտից կոմիսարներին և «Թուրքմեն» նավով Բաքվից ճանապարհվել դեպի սովետական Աստրախան։ Բայց նավի վրա գտնվող անգլիական սպաները և նրանց ծպտյալ գործակալները, ուժի դիմելով, նավը տանում են Կրասնովոդսկ, ուր տիրակալում էին էսեռները ու նրանց անգլիական հովանավորողները։ Նրանք էլ 1918 թ. սեպտեմբերի 20-ին Կրասնովոդսկից 200 վերստ հեռավորության վրա, Ախչա-Կույմա և Պերևալ կայարանների միջև ընկած ավազուտներում արյունոտ հաշվեհարդար են տեսնում 26 կոմիսարների հետ։ Անգլիական զավթիչների և նրանց գործակալ էսեռների ձեռքով գնդակահարվեցին Ստ. Շահումյանը, Պ. Ջափարիձեն, Մ. Ազիզբեկովը, Ի. Ֆիոլետովը, Յա. Զևինը, Գ. Կորգանովը, Ի. Մալիգինը, Մ. Վեզիրովը, Գ. Պետրովը, Վ. Պոլուխինը, Է. Բերզը, Ֆ. Սոլնցևը, Ս. Հովսեփյանը, Մ. Բասինը, Ա. Ամիրյանը, Ի. Գաբիշևը, Ա. Բորյանը, Մ. Կոզանովը, Բ. Ավագյանը, Ս. Բոգդանովը, Ա. Կոստանդյանը, Ի. Մետաքսան, Ի. Միշնեն, Ա. Բոգդանովը, Ի. Նիկոլաշվիլին և Թ. Ամիրյանը։

Երբ բացահայտվեց կատարված չարագործությունը, սովետական աշխատավորները, ամբողջ առաջադեմ մարդկությունը ցասումով դատապարտեցին «քաղաքակրթություն տարածողների» դիմակի տակ թաքնված իմպերիալիստների ստոր ոճիրը։ Պատմությունը ցույց տվեց, որ հաղթանակեցին այն գաղափարները, որոնց համար պայքարում էին 26 կոմիսարները։

Անդրկովկասում սովետական իշխանության հաղթանակի համար Բաքվի կոմունան մեծագույն խոշոր նշանակություն։ Ինն ամիս Բաքվի պրոլետարիատը, հռչակելով սովետական իշխանություն, կոմունիստների ղեկավարությամբ անցավ քաղաքացիական պատերազմի բարդ ու դաժան դպրոց, ձեռք բերեց ներքին հակահեղափոխության և միջազգային իմպերիալիզմի հակասովետական դավերի դեմ մղվող պայքարի մեծ և ուսանելի փորձ։

Բաքվի կոմունայի անձնուրաց ու հերոսական պայքարը խոշոր ազդակ հանդիսացավ ամբողջ Անդրկովկասի բազմազգ աշխատավորության հեղափոխական պայքարի համար ընդդեմ ներքին ռեակցիայի և օտարերկրյա նվաճողների։ Բաքվի կոմունայի, նրա հերոս պաշտպանների փորձով հարստացած, 26 կոմիսարների հերոսական գործերով ոգեշնչված, սովետական Ռուսաստանի օգնությամբ Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները վերջնականապես թոթափեցին նացիոնալիստների և իմպերիալիստների լուծը ու սովետական բոլոր ժողովուրդների համերաշխ ընտանիքում ընթացան սոցիալիզմի ուղիով։

---

15 Նույն տեղում, հատ. 35, էջ 380։

БАКИНСКАЯ КОММУНА И ЕЕ ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ

(К 50-летию расстрела 26-ти бакинских комиссаров)

В. А. АВЕТИСЯН

(Резюме)

В период 1917—1921 гг. рабочие и крестьяне Закавказья и, в частности, бакинский пролетариат, под руководством большевистской партии вписали много героических страниц в летопись социалистической революции. Одной из этих ярких страниц является Бакинская коммуна.

31 октября 1917 г. Бакинский Совет рабочих и военных депутатов по предложению большевиков, против воли меньшевиков, эсеров, мусаватистов и дашнаков, провозгласил в Баку Советскую власть. В конце марта 1918 г., подавив вооруженный мятеж мусаватистов, Советская власть в Баку укрепилась. Был образован Совет Народных Комиссаров под председательством Ст. Шаумяна. Героическая Бакинская коммуна стала знаменосцем социалистической революции в Закавказье. Расстрел 26 бакинских комиссаров английскими интервентами и их эсеровскими наймитами окончательно разоблачил звериное лицо империалистов и предательскую политику националистических партий. Обогащенные опытом Бакинской коммуны трудящиеся Азербайджана и всего Закавказья под руководством Коммунистической партии разгромили контрреволюционных националистов и установили Советскую власть в Азербайджане, Армении и Грузии.